ՀՏԴ 159.9

Հոգեբանություն

Ռուզաննա ԺԱՄԿՈՅՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս
E-mail: ruzanna_rom84@mail.ru

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄՈՏ

Ժամանակակից հասարակությանը ներկայացվող մարտահրավերներին զուգընթաց կարևորվում են անձնավորության ադապտացիայի, անձի հոգեբանական կառույցների պաշտպանության, դրանց հասունացման հիմնախնդիրները: Հոդվածում ներկայացված են երիտասարդների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Հետազոտության տեսամեթոդական հիմքն են կազմում Բ.Գ.Անանևի անձի կառուցվածքի վերաբերյալ տեսությունը և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ հոգեդինամիկ տեսությունը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 22-25 տարեկան երիտասարդների անձնային կառույցները՝ կամքը, ինտելեկտն ու հույզերը: Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության համար կիրառել ենք Ռ. Պլուտչիկի, Գ. Կելլերմանի և Հ.Ռ. Կոնտեի «Կյանքի ոճի ինդեքս» (Life Style Index, LSI) հարցարանը: Տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության:

Այսպիսով, ստացված արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ երիտասարդների անձնային կառույցներից կամքը և ինտելեկտը ամուր դրական համահարաբերակցային կապերով են կապված ավելի հասուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հետ: Իսկ հույզերը

համահարաբերակցային ամուր կապեր ունեն տարբական հոգեբանական պաշտպանական մեխանիզների հետ:
Բանալի բառեր՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ, անձնային կառույցներ, ինտելեկտ, կամք, հույզեր, ինտելեկտուալիզացիա, ռեգրես, կոմպենսացիա:

Р. Жамкоцян

ВЗАИМОСВЯЗЬ ПСИХОЛОГИЧЕСКИХ ЗАЩИТНЫХ МЕХАНИЗМОВ И СТРУКТУР ЛИЧНОСТИ У МОЛОДЫХ ЛЮДЕЙ

Наряду с вызовами, стоящими перед современным обществом, проблемы адаптации личности, защиты психологических структур человека, их созревание стали более важнымы. В статье представлено соотношение механизмов психологической защиты и структур личности молодых людей. Теоретической и методологической основой исследования являются теории Б.Г. Ананьева о структуре личности и психодинамическая теория механизмов психологической защиты.

В ходе исследования были изучены личностные структуры молодых людей (22-25 лет), такие как воля, интеллект и эмоции. Для исследования механизмов психологической защиты использовали опросник Плутчика Р., Келлерманна Х. и Конте Х. Life Style Index, (LSI). Результаты подверглись корреляционному анализу.

Соответственно, полученные результаты позволяют сделать вывод, что личностные структуры воли и интеллекта связаны положительными корреляциями с более зрелыми механизмами психологической защиты. А эмоции имеют корреляционную связь с примитивными механизмами психологической защиты. Полученные результаты показали, что параллельно с развитием личностных структур для их защиты более эффективно применяются зрелые защитные механизмы.

Ключевые слова: механизмы психологической защиты, структуры личности, интеллект, воля, эмоции, интеллектуализация, регресс, компенсация.

R. Zhamkotsyan

THE CORRELATIN OF PSYCHOLOGICAL DEFENSE MECHANISMS AND THE STRUCTURES OF PERSONALITY OF YOUTH

Along with the challenges presented to modern society problems of personality adaptation, protection of psychological structures of the person, their maturation become more significant.

The article presents the correlation of psychological defense mechanisms and the structures of personality of young people.

The theoretical and methodological basis of the research are the theory of B.G. Ananev about the structure of the person and psychodynamic theory of psychological defense mechanisms.

During the research have been studied personal structures of young people (22-25 y.), such as will, intellect and emotions. For the study of psychological defense mechanisms we used the questionnaire of Plutchik R., Kellermann H.and Conte H.R. Life Style Index, LSI. The results were subjected to correlation analysis.
Accordingly, the obtained results let us conclude that personal structures will and intellect are connected with strong positive correlations with more mature psychological defense mechanisms. And the emotions have strong correlation ties with primitive psychological defense mechanisms. The results showed that, in parallel with the development of personality structures, mature defense mechanisms are more effectively used to protect them.
Key words: psychological defense mechanisms, structures of personality, intellect, will, emotions, intellectualization, regression, compensation.

Հոգեբանական պաշտպանության հիմնախնդիրը հոգեբանության մեջ

Ժամանակակից կյանքի սոցիալական, հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնույթի բուռն փոփոխությունները և դրանց արդյունքում առաջացած սթրեսներն ու տագնապները հաղթահարելու համար մարդիկ ստիպված են հարմարվել այդ փոփոխություններին: Անձնավորության հարմարվողականության և անձնային հատկությունների դրսևորումներին նոր պահանջներ են առաջադրվում: Այս փոփոխություններին հարմարման և անձնավորության ինքնագիտակցության ձևավորման, ինքնաիրացման, ինքնադրսևորման համար հատկապես կարևորվում են անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմները:

Անձնավորության հոգեբանական պաշտպանական մեխանիզմների առանձնահատկությունների և դրսևորումների օրինաչափությունների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ պաշտպանական մեխանիզմները կարող են հանդես գալ որպես ախտորոշման չափորոշիչներ:

Գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ հոգեբանները տարակարծիք են: Պաշտպանական մեխանիզմների դրական դերին են անդրադարձել Զ. Ֆրեյդը,[1] Ա. Ֆրեյդը,[2] Ե.Տ. Սոկոլովան,[3] Ն. Մակվիլյամսը:[4] Ըստ նրանց՝ հոգեբանական

---

[1] *Տե՛ս* ***Freud S.,*** *The defence nearo-psychoses // The collected Papers: in 10 v. , N.Y.: Collier Books, 1963, v.2. , P. 67–81.*
[2] *Տե՛ս* ***Freud A****. The Ego and the mechanisms of defense // The writings of Anna Freud, Vol.2, London, 1977, P. 63.*
[3] *Տե՛ս* ***Соколова Е. Т.,*** *Феномен психологической защиты (при поддержке РФФИ, грант №05-06-80240) // Вопросы психологии, 2007, № 4, С. 66–79.*
[4] *Տե՛ս* ***Мак-Вильямс Нэнси.*** *Психоаналитическая диагностика: Понимание структуры личности в клиническом процессе = Psychoanalytic diagnosis: Understanding personality structure in the clinical process, Класс, М., 1998, 480 с., с. 61-90.*

պաշտպանությունը մարդկային գիտակցության նորմալ, առօրյայում գործող ենթագիտակցական մեխանիզմ է: Որոշ գիտնականներ էլ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները համարում են արձագանքման պասիվ-խուսափող ձևեր (Կ. Ռոջերս[1], Վ. Ռայխ)[2]: Տարակարծություն կա նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների խրոնոլոգիական զարգացման վերաբերյալ: Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների դասակարգման վերաբերյալ նույնպես չկա համընդհանուր տեսակետ, որն ավելի է բարդացնում դրանց ուսումնասիրությունը: Մեր ուսումնասիրության շրջանակում մենք կարևորում ենք հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հասունությունը: Ըստ հասունության՝ առանձնացվում է հոգեբանական պաշտպանական մեխանիզմների չորս մակարդակ:

Պաշտպանական մեխանիզմների առաջին մակարդակ (փսիխոտիկ պաշտպանություն): Ախտաբանական այս պաշտպանությունն օգտագործողները գերադասում են իրականության հետ չառնչվել: Այն հաճախ հանդիպում է փսիխոզի տեսքով, երազում կամ մանկական տարիքում: Փսիխոտիկ պաշտպանություններից են՝ մերժումը, աղճատումը, զառանցագին պրոյեկցիան:

Պաշտպանական մեխանիզմների երկրորդ մակարդակ (ոչ հասուն): Այս մեխանիզմները հաճախ կիրառում են մեծահասակներն ու դեռահասները: Նրանց շնորհիվ անձն ազատվում է վախից ու տագնապից, սակայն այս մեխանիզմները շատ կիրառողները համարվում են ոչ հասուն: Նման պաշտպանությունները հաճախ հանդիպում ենք դեպրեսիաների, անձի խանգարումների և դեռահասության ճգնաժամի ընթացքում: Այս մեխանիզմներից են՝ ֆանտազիան, պրոյեկցիան, հիպոխոնդրիան, վարք խաղալը:

Երրորդ մակարդակը ներոտիկ կամ համեմատաբար հասուն պաշտպանական մեխանիզմներն են: Բավականին հաճախ են կիրառվում մեծահասակների կողմից: Սովորաբար արդյունավետ գործող այս պաշտպանական մեխանիզմները, անձի կողմից շատ հաճախ օգտագործվելու արդյունքում, կարող են խնդիրների հանգեցնել շրջապատողների հետ հարաբերություններում: Դրանք են՝ ինտելեկտուալիզացիան, հակազդեցության ձևավորումը, ճնշումն ու դիսոցիացիան:

Պաշտպանական մեխանիզմների չորրոդ մակարդակը կիրառում են հոգեբանական տեսանկյունից հասուն մարդիկ: Դրանք օգնում են ինտեգրվել և արդյունավետ գործել հասարակության մեջ, արդյունավետ աշխատում են

---

[1] *Տե՛ս* ***Роджерс К.Р.,*** *Взгляд на психотерапию. Становление человека, М.: Издательская группа «Прогресс», «Универс», 1994, 480 с.*

[2] *Տե՛ս* ***Райх В.****, Анализ характера / пер. с англ. Е. Поле, М. : Апрель Пресс : ЭКСМО-Пресс, 2000, 528с. (Серия «Психологическая коллекция»).*

տագնապների և վախի դեպքում: Այդ մեխանիզմներից են ալտրուիզմը, սուբլիմացիան, կանխատեսումը, հումորը:

Հասուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների աշխատանքի արդյունքում անձն ադապտացվում է, ունենում է երջանկության զգացողություն, աշխատանքից բավարարվածություն, սոցիալական միջավայրում լավ հարաբերություններ շրջապատողների հետ, ընդհանուր առողջության լավացում և հոգեկան հիվանդություններով հիվանդանալու քիչ հավանականություն: Ի տարբերություն հասուն պաշտպանական մեխանիզմների, ոչ հասուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմները նպաստում են վատ ադապտացիայի, միջանձնային հարաբերություններում խնդիրների և թույլ հոգեկան ու ֆիզիկական առողջության:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և նրանց թեստավորման մեթոդների մշակման մեջ մեծ ներդրում ունի Ռ. Պլուտչիկը, ով գտնում էր, որ յուրաքանչյուր պաշտպանական մեխանիզմի հիմքում կա մի հույզ, որի հաճախակի դրսևորման արդյունքում անձնավորության մոտ առանձին հոգեբանական պաշտպանական մեխանիզմ է ձևավորվում[1]:

Փորձարարական հետազոտություն

Ժամանակակից հասարակության զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե անձնային կառույցների պաշտպանության համար որ պաշտպանական մեխանիզմներն են ավելի արդյունավետ գործում: Այս նպատակով կատարել ենք հետազոտություն, որի հիմնական նպատակն էր բացահայտել 22-25 տարեկան երիտասարդների հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների համահարաբերակցության առանձնահատկությունները: 22-25 տարեկանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այս տարիքը անձնային կառույցների և հատկությունների ձևավորման ու զարգացման համեմատաբար կայուն շրջան է: Նախորդ տարիքային փուլերի ընթացքում ձեռք բերված նորագոյացությունները զարգանում և կայունանում են:

Հետազոտությանը մասնակցել է ՀՊՄՀ-ի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռակա 2-րդ կուրսի 47 ուսանող:

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են ծառայել պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ հոգեդինամիկ տեսությունը և Բ.Գ. Անանևի անձի կառուցվածքի տեսությունը:

Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության համար կիրառել ենք Ռ. Պլուտչիկի, Գ. Կելլերմանի և Հ.Ռ. Կոնտեի՝ *Կյանքի ոճի*

---

[1] *Տե՛ս* ***Plutchik R., Kellermann H., Conte H.R.****, A structural theory of ego defences and emotions // Isard C.E. (ed.) Emotions in personality and psychopathology, N.Y.: Plenum, 1979, p.229-257.)*

ինդեքս (Life Style Index, LSI) հարցարանը, որը հնարավորություն է տալիս հետազոտել երիտասարդների առանձին հոգեբանական պաշտպանական մեխանիզմների կիրառման մակարդակը[1]:

Անձնային կառույցների ուսումնասիրության համար տեսամեթոդական հիմք է ծառայել Բ.Գ. Անանևի Անձի կառույցի հայեցակարգը: Ըստ Բ.Գ. Անանևի՝ անձի կառուցվածքը բաղկացած է միմյանց հետ փախկապակցված երեք կառույցներից՝ ինտելեկտ, կամք, հույզեր, որոնք միմյանց հետ սերտորեն կապված են, և անձի անհատական զարգացման ընթացքում փոխվում է նրանց փոխազդեցության բնույթը[1]:

22-25 տարեկան երիտասարդների կամային որակների ուսումնասիրության համար կիրառել ենք Ն.Ն. Օբոզովայի՝ *Կամքի ուժի ինքնագնահատում* թեստը:[2]

Ինտելեկտի գնահատման համար կիրառվել է Ջ. Ռավենի՝ *Աստիճանաբար բարդացող աղյուսակներ* (Progressive Matrices) մեթոդիկան[3], իսկ հուզական ոլորտը ուսումնասիրվել է Վ.Մ. Ռուսալովի *Հուզականության ախտորոշում* մեթոդիկայով:[4]

Ստացված արդյունքները համահարաբերակցային վերլուծության են ենթարկվել:

Այսպես, 22-25 տարեկանների խմբում P≤0,05 հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմի միջև r=0.362: Քանի որ ինտելեկտուալիզացիան ակտիվ ինտելեկտուալ գործընթացներ է ենթադրում, հետևաբար նման կապը տրամաբանական է: P≤0,05 հավաստիության համահարաբերակցային դրական կապ է արտահայտվել նաև կոմպենսացիայի և ինտելեկտի միջև r= 0.299: Այս կապի արտահայտումը վկայում է, որ ինտելեկտը նպաստում է կոմպենսացիային: Հաշվի առնելով, որ 22-25 տարեկանում անձնային կառույցները բավականին ձևավորված և զարգացած են, իսկ կոմպենսացիան համարվում է հասուն պաշտպանական մեխանիզմ, ապա կարող ենք ասել, որ ստացված համահարաբերակցային կապը տվյալ տարիքային խմբի հասունության որոշակի մակարդակ է արտահայտում:

Բացասական համահարաբերակցային կապ է արտահայտվել ռեգրես պաշտպանական մեխանիզմի և ինտելեկտի միջև (P≤0,05, երբ r= -0.316): Ռեգրեսը ոչ հասուն պաշտպանական մեխանիզմ է, որը դրսևորվում է անձնավորության կողմից վարքի ավելի ինֆանտիլ ձևերի անցնելով: Մենք

---

[1] *Տե՛ս* ***Ананьев Б. Г.,*** *Психологическая структура личности и ее становление в процессе индивидуального развития человека, Психология личности: отечественная психология. М., 1999, с. 7-94.*

[2] *Տե՛ս* ***Ильин Е. П.,*** *Психология воли. 2-е изд., СПб: Питер, 2009, 368 с: ил.- (Серия «Мастера психологии»), с.316-317.*

[3] *Տե՛ս* ***Raven G.****, Progressive Matrices. Psychodiagnostica, narodny rodnik. Bratislava, p.60.*

[4] *Տե՛ս* ***Ильин Е. П.,*** *Эмоции и чувства, СПб: Питер, 2001, 752 с: ил. — (Серия «Мастера психологии»), С. 541-543.*

կարծում ենք, որ այս տարիքում անձնավորությունն ունի բավականին զարգացած ինտելեկտ և խնդիրներ լուծելու համար բավականաչափ միջոցներ, հետևաբար՝ տագնապալի իրադրության պարագայում անձնավորությունը կփորձի ինտելեկտի միջոցով հաղթահարել իրադրությունը, և հակառակը, եթե անձնավորությունը սթրեսային իրադրության հետևանքով անցում է կատարում վարքի ավելի ինֆանտիլ եղանակների, կարող ենք ասել, որ նրա վարքի կարգավորմանը ինտելեկտը չի մասնակցում:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել հակազդեցության ձևավորման և ընդհանուր հուզականության միջև (P≤0,05, երբ r=0.322): Քանի որ հակազդեցության կազմավորման էությունը հենց կայանում է նախնական հույզերի և վարքի զսպման և նոր հույզի կամ վարքային դրսևորման մեջ, իսկ հույզերը վարքի կարգավորիչներ են, ապա հակազդեցության կազմավորման և ընդհանուր հուզականության կապն օրինաչափ է:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել *ինտելեկտուալիզացիա* պաշտպանական մեխանիզմի և ինտելեկտուալ հուզականության միջև (P≤0,01, երբ r=0.386): Ըստ Պլուտչիկի՝ ցանկացած պաշտպանական մեխանիզմի հիմքում ընկած է որևէ հույզ: Ինտելեկտուալիզացիայի դեպքում դոմինանտող հույզը սպասումն է, որին միանում են ինտելեկտուալ գործընթացները: Հետևաբար ինտելեկտուալիզացիայի և ինտելեկտուալ հուզականության կապն օրինաչափ է:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել փսիխոմոտոր հուզականության և *ռեգրես* պաշտպանական մեխանիզմի միջև (P≤0,05, երբ r=0.307): Ռեգրեսի արդյունքում անձը վերադառնում է վարքի և պահանջմունքների բավարարման ավելի վաղ կամ ոչ հասուն ձևերին: Նման կապը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ռեգրես պաշտպանական մեխանիզմի վարքային դրսևորմամբ, որը նաև դրանց համապատասխան հույզերի արտահայտություն է:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել նաև *փոխարինում* պաշտպանական մեխանիզմի և փսիխոմոտոր հուզականության միջև (P≤0,05, երբ r=0.303): Սա նույնպես կարելի է բացատրել *փոխարինում* պաշտպանական մեխանիզմի առանձնահատկությամբ, որի կիրառման դեպքում անձը բացասական հույզը տեղափոխում է հասանելի և թույլ օբյեկտի վրա և հուզական լարվածությունը թուլացնում է: Այս պաշտպանական մեխանիզմի կիրառումը նույնպես ուղեկցվում է վարքային դրսևորմամբ:

Բացասական համահարաբերակցային կապ է բացահայտվել կոմունիկատիվ հուզականության և արտամղման միջև (P≤0,05, երբ r=-0.300): Ստացված կապն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է արտամղման առանձնահատկությամբ, որի գործառույթը անցանկալի ինֆորմացիան, իրադրությունը արագ անձնավորության անգիտակցական ոլորտ արտամղելն է:

Եթե անձնավորությունը արտամղում է կիրառում, նա պարզապես չի ընդունում տագնապալի ինֆորմացիան և իրադրությունը: Հետևաբար կոմունիկատիվ հուզականությունը բացակայում է:

Համահարաբերակցային դրական կապ է բացահայտվել 22-25 տարեկանների *կոմպենսացիա* պաշտպանական մեխանիզմի և կամքի ուժի միջև (P≤0,05, երբ r=0.301): Նման կապը օրինաչափ է՝ հաշվի առնելով, որ ցանկացած բնագավառում հաջողության հասնելու համար նախ անհրաժեշտ են կամային ջանքեր, իսկ կոմպենսացիան, առավել ևս՝ հիպերկոմպենսացիան, պահանջում է կամային ջանքերի լարում՝ նոր կամ անհաջողություն ունեցած ոլորտում հաջողության հասնելու համար:

Դրական համահարաբերակցային կապ է բացահայտվել նաև հակազդեցության կազմավորման և կամքի ուժի միջև (P≤0,05, երբ r=0.336): Քանի որ հակազդեցության ձևավորմանը նախորդում է արդեն իսկ առաջացած հույզի կամ վարքի ճնշում, որից հետո միայն նոր հակազդեցության կազմավորում, ապա պարզ է դառնում, որ հակազդեցության կազմավորման ցանկացած փուլում կամային գործընթացները մասնակցում են:

Այսպիսով, 22-25 տարեկանների անձնային կառույցներից կամքը և ինտելեկտը ամուր դրական համահարաբերակցային կապերով կապված են ավելի հասուն հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հետ, իսկ հուզական ոլորտի պաշտպանության համար պատասխանատու են տարրական պաշտպանական մեխանիզմները: 22-25 տարեկանների մոտ ինտելեկտի զարգացման արդյունքում *ռեգրես* պաշտպանական մեխանիզմ չի կիրառվում կամ շատ քիչ է կիրառվում: Իսկ հույզերի հարաբերական կայունացման հետ արտամղումը հետաճ է ապրում: Միևնույն ժամանակ ավելի հասուն պաշտպանական մեխանիզմների (ինտելեկտուալիզացիա, հակազդեցության ձևավորում, կոմպենսացիա) զարգացումը պայմանավորված է անձնային կառույցների՝ ինտելեկտի և կամքի զարգացման մակարդակով:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: